

Մրցույթի հրավեր

- Ամսաթիվ. 19 դեկտեմբերի 2014թ.
- Վարկի համարը և անվանումը. 2993-ARM, Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք ներդրումային ծրագիր – Տրանշ 3
- Պայմանագրի համարը և անվանումը. T3-G, ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարության համար ճանապարհային չափումների տվյալների հավաքագրման սարքավորումների մատակարարում և տեղադրում
- Հայտերի ներկայացման վերջնաժամկետ. 11:00 (Երևանի ժամանակով) 06 փետրվարի 2015թ.

1. Հայաստանի Հանրապետությունը ստացել է վարկ Ասիական զարգացման բանկից (ԱԶԲ) Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի Տրանշ 3 ծրագրի համար, և մտադիր է օգտագործել այդ վարկի մի մասը վճարելու վերը նշված պայմանագրի ներքո վճարումները կատարելու համար, ինչի համար թողարկվում է սույն հրավերը: Նշված պայմանագիրը համատեղ կֆինանսավորվի ԱԶԲ-ի և Հայաստանի Հանրապետության կողմից: Ընտրության գործընթացը կկառավարվի ԱԶԲ-ի իրավասության կանոններով և կանոնակարգերով:
2. Այժմ Հայաստանի Հանրապետության Տրանսպորտի և կապի նախարարությունը (հետագայում՝ Գնորդ) հրավիրում է իրավասու հայտատուներին ներկայացնելու փակ ծրարներ մրցույթային փաստաթղթերով ներքոհիշյալ ապրանքների մատակարարման և հարակից ծառայությունների մատուցման վերաբերյալ:

2.1. Ապրանքների ցանկը.

Սույն ցուցակում նշված ապրանքային նշաններին կատարած հղումների նպատակը միայն հայտատուին Գնորդի պահանջների վերաբերյալ կարծիք կազմելու համար է: Հայտատուները պարտավոր չեն տալ գնանշում կոնկրետ մատակարարի/արտադրողի ապրանքների համար: Հայտատուները կարող են առաջարկել և գնանշում տալ խմբաքանակում նշված համարժեք ապրանքների համար:

Խմբաքանակ Ա. Ավտոմեքենայի վրա տեղադրվող ճանապարհի և ծածկի տվյալների հավաքագրման սարքավորումներ: Այս սարքավորումները նախատեսված են ճանապարհի վիճակի ուսումնասիրության համար և ավելի զգայուն սարքավորումներ՝ ավելի ճշգրիտ ուսումնասիրությունների համար, որոնք կարող են կիրառվել (միջպետական) հարթ ճանապարհների համար:

Խմբաքանակ Բ. Ավտոմեքենայի վրա տեղադրվող ճանապարհի և ծածկի տվյալների հավաքագրման սարքավորումներ: Այս սարքավորումները նախատեսված են ճանապարհի վիճակի ուսումնասիրության համար, որոնք կարող են կիրառվել մնացած (հանրապետական և տեղական) ճանապարհների համար:

Խմբաքանակ Գ. Ճանապարհային ակտիվների կառավարման գործիք: Այս գործիքը նախատեսված է ցանկացած տիպի սարքավորումներով (հատկապես Խմբաքանակ Ա-ով և Բ-ով) հավաքագրված տեղեկությունների պահպանման և վերլուծության համար:

Խմբաքանակ Դ. Լաբորատոր սարքավորումներ

2.2. Բոլոր ապրանքները պետք է ապահովված լինեն արտադրողի ստանդարտ երաշխիքով:

2.3. Հայտատուները կարող են հայտ ներկայացնել մեկ կամ մի քանի Խմբաքանակների համար ինչպես սահմանված է Մրցութային փաստաթղթերում:

3. Միջազգային մրցույթը (International Competitive Bidding) իրականացվելու է ըստ ԱԶԲ-ի երկու փուլով (Two-Stage) մրցութային ընթացակարգի: Մրցույթը բաց է ԱԶԲ-ի իրավասու երկրներից բոլոր մասնակիցների համար:

4. Այս մրցույթին կարող են մասնակցել միայն իրավասու հայտատուները հետևյալ հիմնական որակավորումներով՝

- տարեկան առնվազն շրջանառություն (վերածված ԱՄՆ դոլարի)՝ հաշվարկված որպես վերջին 3 տարվա ընթացքում Հայտատուի կողմից կատարված պայմանագրերի դիմաց ստացված վճարումների գումար
 - 1 600 000 (մեկ միլիոն վեց հարյուր հազար) ԱՄՆ դոլար Խմբաքանակ Ա-ի համար,
 - 500 000 (հինգ հարյուր հազար) ԱՄՆ դոլար Խմբաքանակ Բ-ի համար,
 - 100 000 (հարյուր հազար) ԱՄՆ դոլար Խմբաքանակ Գ-ի համար,
 - 800 000 (ութե հարյուր հազար) ԱՄՆ դոլար Խմբաքանակ Դ-ի համար,

Եթե Հայտատուն համատեղ ձեռնարկություն է, ապա, ՀԶ-ի յուրաքանչյուր անդամ պետք է բավարարի պահանջի առնվազն 30 տոկոսին:

- Վերջին 3 տարիների ընթացքում որպես հիմնական մատակարար հաջողությամբ ավարտված առնվազն 3 պայմանագրերում մասնակցություն: (Այդ պայմանագրերի գինը, բնույթը և բարդությունը պետք է լինեն կնքվելիք պայմանագրին համեմատելի): Եթե Հայտատուն համատեղ ձեռնարկություն է, ապա, ՀԶ-ի յուրաքանչյուր անդամ պետք է որպես հիմնական մատակարար հաջողությամբ ավարտած լինի առնվազն 1 պայմանագիր, իսկ գլխավոր գործընկերը՝ առնվազն 2 պայմանագիր: Առաջարկվող ապրանքները պետք է լինեն արտադրության մեջ առնվազն 5 տարի, և դրանցից առնվազն 5 միավոր պետք է լինի վաճառված և լինի հաջողությամբ գործածության մեջ առնվազն 5 տարի: Սույն պահանջը վերաբերում է յուրաքանչյուր խմբաքանակին առանձին:
- Հայտատուն պետք է ներկայացնի կայուն ֆինանսական կարգավիճակ

- ցույց տալով երկարաժամկետ շահութաբերություն՝ աուդիտի տարեկան ֆինանսական հաշվետվությունների միջոցով (հաշվեկշիռ, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն) առնվազն վերջին 3 տարիների համար, Հայտատուի զուտ ակտիվները, հաշվարկված որպես ընդհանուր ակտիվների և ընդհանուր պարտավորությունների տարբերություն, պետք է լինի դրական վերջին տարվա համար:

- Հայտատուն պետք է ներկայացնի Ֆինանսական միջոցների հասանելիություն ինչպիսին են՝ լիկվիդային ակտիվները, չծանրաբեռնված անշարժ գույքը, վարկային գծերը, և այլ ֆինանսական միջոցները բացի պայմանագրային կանխավճարների, համապատասխանելու համար դրամական հոսքի պահանջին.

- 103 000 ԱՄՆ դոլար Խմբաքանակ Ա-ի համար,

- 35 000 ԱՄՆ դոլար Խմբաքանակ Բ-ի համար,

- 7 000 ԱՄՆ դոլար Խմբաքանակ Գ-ի համար,

- 55 000 ԱՄՆ դոլար Խմբաքանակ Դ-ի համար:

Եթե Հայտատուն համատեղ ձեռնարկություն է, ապա նրա անդամները պետք է համատեղ բավարարեն վերոնշյալ պահանջը:

- Բոլոր ընթացիկ դատավարությունները կդիտարկվեն որպես լուծված Հայտատուի դեմ և դրանք չպետք է կազմեն Հայտատուի զուտ արժեքի ավելի, քան 30%-ը: Եթե Հայտատուն համատեղ ձեռնարկություն է, ՀԶ-ի յուրաքանչյուր անդամ պետք է բավարարի այս պահանջին:

5. Առաջին փուլի մրցութային փաստաթղթերը անգլերեն լեզվով կարելի է ձեռք բերել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացման կազմակերպություն ՊՈԱԿ-ից (Շահառու) մինչև **2015թ-ի փետրվարի 06-ը**: Երկրորդ փուլի մրցութային փաստաթղթերը անգլերեն լեզվով մասնակիցներին կտրամադրվեն անվճար: Մրցութային փաստաթղթերը կտրամադրվեն աշխատանքային ժամերի ընթացքում՝ ժամը 9:00-ից մինչև 17:00, ստորև նշված հասցեով գրավոր դիմումի ներկայացման դեպքում և վճարելով չփոխհատուցվող գումար՝ 200 (երկու հարյուր) ԱՄՆ դոլարի կամ 80 000 (ութսուն հազար) ՀՀ դրամի չափով, և այդ վճարման հանձնարարագիրը: Վճարման եղանակը՝ բանկային փոխանցում Շահառուի հետևյալ բանկային հաշվին:

Հայաստանի ներսում դրամով փոխանցումների համար.

- Բանկ՝ Արարատ բանկ, ԲԲԸ,
Հասցե՝ ՀՀ, Երևան, Պուշկին փ. 19
Շահառուի հաշիվը՝ 15100 090 178 60 500
Շահառու՝ “Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր”
ՊՈԱԿ

ՀՎՀՀ՝ 027 089 21
Երևան, Նալբանդյան 28

Արտերկրից Հայաստան ԱՄՆ դոլարով փոխանցումների համար.

- Correspondent Bank: Deutsche Bank Trust Company
60 Wall Street, New York, NY, 10005,
SWIFT: BKTRUS33
Beneficiary's Bank: Araratbank OJSC,
Add: 19 Pushkin Street, Yerevan, Armenia;
SWIFT: ARMCAM22;
Account no: 044 535 17
Beneficiary: "Organization for Implementation of North-South Road Corridor Investment Program" SNCO;
Account no: 15100 090 178 60 301
- կամ
Correspondent Bank: Raiffeisen Zentralbank Oesterreich AG
AM Stadtpark 9, A-1030 Vienna
SWIFT: RZBAATWW
Beneficiary's Bank: Araratbank OJSC,
Add: 19 Pushkin Street, Yerevan, Armenia;
SWIFT: ARMCAM22;
Account no: 070-55.076.558
Beneficiary: "Organization for Implementation of North-South Road Corridor Investment Program" SNCO;
Account no: 15100 090 178 60 301

Մրցութային փաստաթղթերը օպտիկական կրիչի վրա կուղարկվի սուրհանդակային ծառայության միջոցով: Ուշ առաքման կամ կորստի համար Գնորդը պատասխանատվություն չի կրելու:

6. Հայտատուները մինչև հայտերի ներկայացնելու վերջնաժամկետից 15 օր առաջ կարող են կատարել հարցումներ մրցույթի վերաբերյալ:
7. Մրցութային փաստաթղթերը ձեռք բերելու և տեղեկություններ ստանալու համար հայտատուները պետք է դիմեն.

«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր» ՊՈԱԿ-ի գրասենյակ,
Գնումների և պայմանագրերի կառավարման ղեկավար՝ տկն. Կարինե Աբրահամյանին
Փողոց՝ Թումանյան 38
Քաղաք Երևան
Փոստային ինդեքս՝ 0002
Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն

Հեռախոս՝ +374-60-50-68-70

Էլեկտրոնային հասցե՝ abrahamyank@northsouth.am

8. Մրցույթային փաստաթղթերը պետք է ներկայացվեն մինչև 2015-ի փետրվարի 06-ը, ժամը 11:00 (Երևանի ժամանակով) ներքոհիշյալ հասցեով: Հայտերը պետք է ուղեկցվեն հայտերի ապահովումով բանկային երաշխիքի տեսքով, հետևյալ չափի.
 - Խմբաքանակ Ա. 25 500 ԱՄՆ դոլար
 - Խմբաքանակ Բ: 8 500 ԱՄՆ դոլար
 - Խմբաքանակ Գ: 1 600 ԱՄՆ դոլար
 - Խմբաքանակ Դ: 13 000 ԱՄՆ դոլար:
9. Ուշացված հայտերը կմերժվեն: Հայտերը կբացվեն վերջնաժամկետից անմիջապես հետո՝ հայտատուների ներկայացուցիչների ներկայությամբ, ովքեր կցանկանան մասնակցել հայտերի բացմանը հետևյալ հասցեով՝

«Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր» ՊՈԱԿ-ի գրասենյակի նիստերի դահլիճ
Փողոց՝ Թումանյան 38
Քաղաք Երևան
Փոստային ինդեքս՝ 0002
Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն
10. Գնորդը չի կրելու որևէ պատասխանատվություն հայտերի պատրաստման կամ հանձնման հետ կապված ծախսերի համար, որոնք կրել է Հայտատուն: